

## ՅՈՎԱՆԿ ՅԱ - ԱՄԵՐԻԿԱ

### ՄԱՆԿՈՒԹԻՒՆՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԷՀ

**Ա** եանքն յառաջադիմութիւն է . ով որ մարդկային անցողական իրաց մէջ չի յառաջադիմէր , կը յետադիմէ . ով որ կանկ կ'առնու կամ կը զանդագի ճամբու մէջ , և փոյթ չի լնէր այլոց արագ քայլերուն , ժամանակին չի հասնիր իր փափաքելի վախ . ճանին , և անփոյթք իրենց անձանց և անդործութեան վրայ ցաւելէն զատ ուրիշ ընելիք շունին :

իրը իր կը ծնանի և կը վարէ զժամանակն . փոքր աղբիւրներէ կը բղիւն մեծամեծ գետերն . և ով որ 'ի սկզբան կանկ կ'առնու , չէ կարող իր գործն աւարտել :

Նախկին արմատականք՝ այժմ ամենէն աւելի շափատօքեալներն են , և այսօրուան շատ երեակայութիւնք և կարծիք վաղուեան ճշմարտութիւններ կրնան սեպուիլ :

Ով կրնար ժամանակաւ մտքէն անցընել կամ հաւատալ բռվանդակ Եւրոպից այժմեան եղական տեսարանին , որոյ նաւերն այսօր կը կտրեն զանապատն , Միջերկրականէն կարմիր ծով և անտի 'ի Հնդիկ կըս անցնելու համար . անթիւ շողեշարժ գործեաց , որք իրենց ահազին զօրութեամբք՝ կարող պիտի ըլլային մատակարարել ընդ ծով և ընդ ցամաք աշխարհաց հեռաւորութիւնքն համառօտելու զարմանաքանի միջոցներն , գիւրացընելով բազմաթիւ աշխարհաց վերաբերութիւններն , և արուեստոից և շահագործութեան օգնութեան բազուկ կարկառելով . ստորերկրեայ երկանաձիգ ուղիներու , որ նըման մարդկային մտածութեան բանալով ճամբաներ լերանց շղթայից մէջ , և կտրելով անցնելով ծովեր , կարող պիտի ըլլային բնութեան ամենէն ահաւոր արգելից յաղթել . հեռազրաց , որք մի քանի բոպէներու մէջ լաւեր կը հազորզեն մէկ կիսագնդէն 'ի միւսն , յաղթելով միանգամայն միջոցի հեռաւորութեան և ժամանակին :

Արագընթաց յառաջադիմութեանց գաղափարաց ընդարձակութեան և ուրիշ բազմաթիւ իրականութեանց միջոց , որ մեզ այժմ

ընտանիք և սովորական կը թուին, կարծես թէ սոյն այս յառաջադիմութիւնը կը խաւարի և իւր փայլը կը կորսնցնէ, արևելան խաբէական կացութեան բաղդատամամբ։

Հանճար և ելեկտրականութիւն մարդկային գործոց այնպիսի մղում մը առուին՝ որ այժմեան ընկերութեան կեանքն է, անընդհատ և գահավիժական շարունակութիւն մը նորանոր տապաւորութեանց և ըդգացմանց։ Խեթենայք այս միջոցներով կը գործածեն իրենց բազմաթիւ և ահադին անդամներն՝ որք անդգայ կեանքէ մը կը շարժին, որուն մարդուս ոյժն չէ բաւական դէմ դնելու, և իր ձեռաց ոչինչ շարժում մը բաւական է անսնց հանգիստը կամ գործը սահմանելու։

Յառաջադիմութեան ճամբուն մէջ ընդունայն ճիգն է կոռուիլ այս նորաձեւ մակընթացութեան դէմ։ քանի մը վաղեմի ծրագիրը, այլ ևս չեն համապատասխաներ ժամանակաց պիտոյից։

Արդի ժամանակն և բազմադիմի օգուտներն իրաւամբ կը պահանձնեն չկենալու կամ յետո չդառնալու, որպէս զի Ղովտայ կնոջ հանդիպածն երկրորդ անգամ չպատահի, որ ետև նայելուն համար՝ անշարժութեան դատապարտուեցաւ։ բրածոյից և մուժիաներու համար թանգարանները կեցած են։ ասոնք են իրենց տեղերն։ Այէն բանի մէջ պէտք է ժամանակին գաղտնիքն ըմբռնել և անոր ոգին զգենուլ։ անցելըն փառքն եղաւ չնշին միջոցներով մեծամեծ արդիւնք յառաջ բերել։

Դարուս տիրապետող մրցութեան ջերմի, յառաջադիմութեան հետզհետէ առաւելութիւնն, գլխովին ապարդիւն ըրած են որ և իցէ հակառակասէր յամառութիւն այն անձին՝ որ հին միջոցներ նորոց զէմ զներու ջանքին մէջ է։

Կարելի չէր որ հինք պարզ սուրերով, տէգերով, և աղեղամրգ զինեալ հիմակուան ահաւոր պատերազմական թէ ծովային և թէ ցամաքային ուժոյն և արագութեան հաւասարէին, և հին արուեստաւորք որք միայն ձեռք կը գործածէին՝ կարող ըլլային այժմեան արուեստանոցաց հետ մրցիլ, զոր յառաջադիմութիւն և գիտութիւններանոր զիւտերով և գործադրութեամիք մեզ կը մատակարարեն։ Աւետարանին մէջ անդործ ծառային առակը զոր տէրը դատապարտեց՝ իր տաղանդը արժանապէս յարգել չգիտնալուն համար, մեզի պէտք է ի խրատ և ՚ի զգուշութիւնն ըլլայ։ Եղանկ է այն ազգաց որոց լապտերն ապագային մէջ մարած գտնուին։

Ապագային ասպարէզն ամէնուն համար բաց է։

Եղուայ զօրութեան առաջին գտնողն արդեօք կրնար մոքէն անցընել, թէ որչափ տեսակ գործադրութեանց ճամբայ պիտի բանար իր գիւտն, թէ որչափ քաղաքական կերպարանափոխութիւններ յատաշ պիտի բերէր։

Բնութիւնն նոյն իսկ նուռաստ աստիճանի մարդու վրայ հրաշակ

երեսյթներ յառաջ կը բերէ . զագիր որդի մը որ տղմերու մէջ կը սո-  
զայ, աշխայժ երկնապարիկ թիթեռնիկը ծնանել կու տայ:

ինչպէս հասարակ առազէն կը ձևանայ այն փայլոն բիւրեղն, ո-  
րով փալիկոս և Նետոն առտեղաց զիւտերն ըրին, այսպէս շատ ան-  
գամ տեսնուեցան ամէնէն խոնարհ դասակարգերէն խոհական մըտ-  
քեր և զարմանալի զիւտեր:

Արդի ժողովրդական դասակարգն հնոց միամտութեան շրջանակէն  
դուրս է, մանաւանդ Եւրոպայի մէջ. վարժարանք, քաղաքական  
սահմանադրութիւնք, մեքենական աշխատութիւնք, նոյն իսկ այն դա-  
սու մոքերն արմէնցուցին, իրենց անձին յարդը և քիչ մը դիւրակե-  
ցութեան կարելիս թիւնն առջնունին դնելով: Գործաւորն, որ այս  
մասնախումբին ընտիր մասն է, ինքն ևս պատշաճագոյն վիճակի հե-  
տամուտ է իրաւամբ, և իրեն թիկունք կ'առնու զբաժանարար ար-  
դարութիւն:

Սակայն գործաւոր մը՝ իր ամէնօրեայ ոգեպահիկը ճարելու հար-  
կադրուած ըլլալով, մտաւորական մշակութեան ետևէ ըլլալու ժամա-  
նակ չունի և ոչ իր զզացմոնքը հսկելու ապնուացընելու . սրտին թը-  
ռիչքը մտաւորականաց հետ համաձայնեցընելու ժամանակը կը պակ-  
սի իրեն. նոյնպէս չունի ժամանակ՝ կենաց բաղձանաց հառաջանաց և  
պիտոյից պատերազմի մէջ յաղթող ենելու միջնորդներն ուսանելու:

Այս գործը կը վերաբերի այն մարդկանց որ մասնաւոր հանգամա-  
նաց ձրիւք օժտեալ, գիտեն և կարող են ազդել բարերար ազդեցու-  
թիւն մը արդի հասարակ ժողովրդեան յառաջագիմութեան վրայ.  
« ընկերական անկարգութեանց զէմն առնելու զօրաւոր միջոց մը  
կայ, կ'ըսէր կոմնն Քավուր, և է այն՝ որ բարձր դասակարգի անձինք  
անձնանուէր աշխատին ստորնագունից բարւոյն համար, ապա թէ  
ոչ շարիքն անխուսափելի է »:

Աւրեմն իր գիտուն պէտք չէ ձգուի ժողովուրդ մը, պէտք է կրթել  
զայն իր զաղափարաց համեմատ, մշակել նորա բարի բարի հակամի-  
տութիւնները, զայնս բայց կ'ուզեմք զոր Աստուած կը ներշնչէ անոր՝  
խղճմտանաց թաքուն ծայնով. և այն ատեն աշխատասէր, մտադիւր  
և անձնանուէր պիտի ըլլայ՝ ամէն ոք իր ընտանեաց երջանկութիւնը  
հայթայթելու:

Մարդն աշխատութեան համար ծնած է. այս է պատուիրանաւն  
Աստուծոյ՝ իւր վիճակը, իւր ժառանգութիւնն, երկիր և ծով իր աշ-  
խատութեան դաշտուն են:

Մարդն աշխատութեամբ կը սնանի, կ'աղնուանայ, կը կատա-  
րելացործի. անոր պարտական է իր առողջութիւնը և բարեկեցու-  
թիւնը զոր կը վայելէ, և նոյն իսկ իւր անձին գոհութիւնը և ծերու-

թեան օրերուն հանգստութիւնը . աշխատութիւնն է օգտակար և փրկաւէտ հրահանք առաջինութեան , որ կ'ապահովէ մարդուս բնութեան վրայ տիրապետել և անոր պատուղ վայելել , որ երկրիս վրայ պատուոյ ճանապարհ կը բանայ , որ յաւիտենական պսակ կը պատրաստէ յերկինս : Զինքը կ'օրհնեն յարգութեամբ , նուիրանօք և փոխարինութեամբք օրական ապրուստնին դանող անձենք , սրտի և խղճի անդորրութեամբ . և քաղցր ու սփոփիչ հանգստեամբ կ'օրհնէ զինքն Աստուած : Աւրեմն Աստուածոյ և մարդկան ընդունելի ըլլալու միջոց աշխատութիւնն է . և կարելի է ըսել թէ յայնմ կայացեալ է մարդկային երջանկութիւնն : Աշխատութիւնն իր զրաղանք կը հեռացնէ դարձեալ ախտերը և թշուառութիւնը , և իրաւամբ կ'ըսէր Ֆրանքին թէ , — անօժութիւնը գործունեայ մարդուն դրան առ ջև կեցած չի համարձակիր ներթ մտնել — :

Ամեն գործաւորներէն աւելի երջանիկ և առանձնաշնորհեայ են առողջապահական նկատմամբ , ժուժեկալ , համեստ և ուժեղ անձինք , որ երկիր կը բանին , կը մշակեն զայն , և որոց անպանոյն ազատ և նահապետական կեանքն իրենց հայրենեաց կապուտակ երկնից տակ կը սահի խաղաղ և անկասկած , հեռի քաղաքային կործանիչ փորձութիւններէն . Երկրագործութիւնն ամենէն աւելի փիլիսոփայական և շահաւետ կրթութիւն մ'է , մարդոյ և բնութեան ներքին աշխատակցութիւնը և արարածոյն զորդոյն արարշութեան հետ արգասարեր միւսութիւնն է :

Մարդոյն աշխատութեամբ իր նախկին բնական վիճակէն քաղաքականութեան աստիճանին բարձրացեր է . այս է զօրաւոր լծակը՝ որ զինքըն այս բարձրութեան հասուց :

Ընդհանուր Աշխարհահանդէններու մէջ , որը աշխատութեան յաղթանակի ցոյցը են , արդի քաղաքականութեան կեղրոններու բնակիչը քաջ կրնոյ տեսնել և մատամբ շօշափել թէ ինչպէս մարդու կըրթութեամբ և մշակութեամբ իր նախնական վիճակն եկեր հասեր է աստիճանաբար մեր ծաղկեալ օբրուուն յարմար դիրքն առներու . ինչպէս բնութիւնն զմարդիկ վայրենի կ'ընէ , և պտուղները դառն կամ անհամ , կրթութիւնն և մշակութիւն կիրթ քաղաքացի կ'ընեն ըզմարդ և պտուղները համելի և քաղցրահամ :

Ժողովուրդոյն որ ընկերութեան մէջ աահմանեալ է մարդկային ընտանեաց երեք քառորդ մասը կազմելու , միշտ երեսի վրայ տղիաւութեան մէջ նկատուած էր , ինչպէս նաև բարրարոս ազգաց մէջ կը տեսնուի , քանի որ գերութեան ցած և անարդ տառապանքներէն չազատեցաւ , զոր կը պարտի զիշաւորապէս քրիստոնէութեան , աւետարանական քարոզութեան որ ազատութեան և հաւասարութեան սկզբունքները ծաւալեց յընդհանուրս : Ժողովրդեան դասակարգի բարւոքում յաջողելու համար բարոյական և իմացակա-

նութեան մղումն հարկաւոր է . աշխատութիւնն միանալով կրթութեան հետ , պիտի տեսնուի որ հետզհետէ աղքատութիւնն անհետ պիտի ըլլայ , պիտի չտեսնուին այլ ևս բազմաթիւ թշուառականներ անոր և անյարկ , գողք և հուղկահարք որք ընկերութեան խաղաղութիւնը կ'աւերեն , և միանգամայն այնչափ ապականեալ անձինք որք ամէն տարի գործած եղերանց և ոճիրներու համար դատապար . տուած՝ բանտերու մէջ կը բազմանան :

Պատմութիւն և փորձ կ'ուսուցանեն որ քաղաքական կենաց գործերու մէջ յաղթութիւնն անոր է որ կամք ունի . և բաղդն անոր՝ որ գիտէ աշխատախլ . զի աշխատութիւնն ամենազօրաւոր գէնք մ'է թըշուառութեան հարուածոց գէմ , որք և գպրատուն կրնան ըսուիլ ամէն աստիճանի անձանց : իրբեմն անիրաւ և անգութ կ'ըլլան մարդիկ . աղքատութիւն և թշուառութիւն իրբն խոնարհութեան և գառապարտութեան նշանակ կարելի է համարել , և սակայն վշտակութիւնն յաճախ քաւութիւն մ'է որ կը սրբէ զմարդ և կ'աղնուացընէ : Ո՞վ արդեօք ապահով կրնայ ըլլալ յանկարծական արկածներէ . և ով է դարձեալ նա որ ոչինչ ունենայ իւր գժրախտութիւնը քաւելու :

Շատ անգամ խոնարհ և անձանօթ տնակներու մէջ թշուառութեան վրայ կանգնուած յաղթանակներ կը ստուգուին , և անգամար վշտակութիւնը՝ ուրախութիւն և միխիթարութիւն կը ծնանին . մեռելութիւնք և անձնանուիրութիւնք որ թէպէս անտես , անձայն կը գործուին , և զորս մեծաձայն շեֆորը չողջուներ , սակայն այնպիսի այնպիսի գրկանք , այնպիսի տնանկութիւնք և լըմունք են , որք ունին իրենց պատերազմական դաշտը և դիւցազննքը :

Ժողովրդական գասու մէջ բարցականութեան առողջ սկզբունք ծաւալելով , հարկ է ՚ի նմին ժամանակի յաշխատութիւն զրդաել ըդնա . սկզբունք յամենայնի գժուարին են գործադրութեան մասին . ծանր արգելք խսկոյն յառաջ կ'ելնեն , ստոյգ է , սակայն ըլլոց և լեռանց մաքուր օդը կարելի չէ չնշել՝ առանց վերելից գժուարութեանց յաղթելու . և երբ յաղթական մը յերգ գրուատեցաւ՝ առանց կանխաւ գաշտաց պատուաւոր փոխեաց մէջ թամբխուելու :

Ճարտարութեան տեղի կու տայ ամենայն ինչ . ոչինչ կ'ընդդիմանայ մարդուս ձեռաց առջև . նոյն իսկ քարածայր լերանց անարդիլ կողերն անցքեր կը բանան որոց մէջէն իր կայծակնաձիգ գործիներն աղաղակաւ կ'ընթանան , հողն և ծավ , լըսոն և երկիրս շողին և շանթ , գրեթէ ամէնքն ալ մարդուս հանճարոյն կը հպատակին :

Առանց աշխատութեան և ջանից ոչինչ կարելի է ձեռք բերել . մանաւանդ բնութեան մէջ , որ գրեթէ մարդկային մարց նման նախանձաւոր իր անզին զանձոց վրայ , կարծես թէ կամաւ երկրիս խորերը պահած է ոսկին , աղամանդը , մարգարիտն ու բուսաբը ծու-

վերուն յատակը . սակայն մարդս իւր հանճարով այս ագահին յաղ-  
թելու կերպը գտաւ , և յանդուզն ծովասոյզը արհամարհելով իր կե-  
նաց վտանգները՝ կը խորասուզի ծովուն անդունդը և անկէ մարդա-  
րիտ և բուստ կը հանէ . մինչդեռ միւս կողմէն աներկիւղ հանահանը՝  
կը փորէ լեռները և նոցա խորերէն դուրս կը հանէ այն քարիկն որ  
կայսերաց թագեր կը զարդարէ , ձեռք բերելով ՚ի նմին ժամանակի  
այն շքեղապանծ մետաղը՝ որ բոլոր աշխարհի կը տիրապետէ :

Ժողովրդեան կրթութենէն կախումն ունի մասնաւորապէս մարդ-  
կութեան բարին , ևս առաւել զիտութեանց և արուեստից յառաջա-  
դիմութենէն , բարյական զգացման կարողութեան զօրանալէն , ար-  
գարոյն և ճշմարտին : կրթենք ուրեմն մողովուրդը , ջանալով առողջ  
բարյական ուսմամբ իմացականութիւնն ևս լուսաւորել :

« Դպրատունք , կըսէր Վիկաոր Հիւկոյ , Փարիզի Աւսումնական  
կաճառին մէջ , քաղաքականութեան լուսաւոր կէտերն են , դուք ձեր  
քաղաքաց վրայ հոգ ունիք . կ'ուզէք ձեր տանց մէջ ապահով ըլլալ ,  
նախազգուշութիւն ըրած էք փողոց մ'անգամ մ'թին թողլու վտան-  
գէն ազատ մնալու . ևս մեծագոյն վտանգին վրայ մտածեցէք , որ է  
մարդկային միտքը միտութեան մէջ թողուլ : Միտք ճանապարհաց  
պէս բաց են . մննողք և ենողք անդադար և բազմաթիւ են հոն .  
բարի և շար դիտաւորութեանց այցելուներ ունին , շարախորհուրդ  
անձինք հոն կրնան յաճախել : Զար մտածութիւնն մը զիշերուան գողի  
կը նմանի . հոգին իր շար գործակատարներն ունի . Լոյս ըրէք ամեն ,  
ուրեք մարդկային մտաց մէջ . մի թողուք այն խաւարչուտ անկիւնե-  
րը՝ յոր աւելորդապաշտութիւն , մոլորութիւն և ստութիւն կրնան  
դարանիլ : Ցգիտութիւնն արշալոյնն է , շարն յառաջ կ'ընթանայ :  
Մտածենք այս լուսաւորել ճամբաներն , այլ ևս աւելի մտքերն և  
Միր օրերուն ընկերական գասուն մէջ ժողովուրդն ամենազգայուն  
է տպաւորութեան նկատմամբ . իւր զգայնութիւնը կ'իշխէ վրան և  
կ'այլայլէ . սակայն թեթէ զիուխն երբեմ հեշտեաւ ազդեցութիւն կը-  
րելովն հանդերձ՝ սիրտն ընդհանրապէս բարի է : Ժողովուրդն ընկե-  
րութեան մէջ զրեթէ այն է՝ ինչ որ է մանուկ մ'ընտանեաց մէջ . ա-  
սոր համար շատ ներողամիտ պէտք է ըլլալ իրեն , սիրել զինքը կըր-  
թելու համար , և մատակարարել միջոց մը բոլոր հարկաւոր կարողու-  
թիւնները ձեռք բերելու՝ զոր բանիւ , անդորրութեամբ և իմաստու-  
թեամբ կարելի է ստանալ :

Շարումնակեցի